Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5746
5747
5748
5749
5750
5751

891.99U
U-50

Ղ. ՄԵԼՈՅԵԱՆ

Մարդիկ Արածում են

(ՊՕԷՄԱ)

1910 ■ ՏՊԱՐԱՆ Ա. ՇԱՀԷՆ ■ Կ. ՊՈԼԻՍ

ՄԱՐԴԻԿ ԱՐԱԾՈՒՄ ԵՆ

Գրքերը Ղ. Մելոյեանի
Գ10 գրք. 5
Գրադարան
Երևան

Ղ. ՄԵԼՈՅԵԱՆ

Ա4գ

Մարդիկ Արածում են

(ՊՈԷՄԱ)

1918 ՏՊԱՐԱՆ Ա. ՇԱՀԷՆ Կ. ՊՈԼԻՍ

1689

7549.57

ՄԱՐԴԻԿ ԱՐԱԾՈՒՄ ԵՆ

(Սալի նկար)

Հովիտի կողքին, բլուրի վրայ,
Այդ ի՞նչ է արդեօք, սև գետնին կպած.
— Մի քանի դռներ. աղբերի կոյտեր,
Եւ այդ ցած գմբէթ տների միջև՝
Միթէ նշան չէ՞, որ դա մի գիւղ է...
Երբեմն գուցէ ճոխ ու բազմամարդ,
Բայց այժմ այդպէս աղքա՜տ, աւերա՜կ...
Գիշերը ամբողջ մի շուն չի հաչում.
Պահապանին ձայն բնաւ չի լսւում...:

Կէս գիշեր եղաւ, լուսինը փայլեց,
Աստղեր նրա հետ մրցել սկսան,
Ամբողջ հովիտը ծփում է լոյսով,
— Բայց գիւղը՝ մեռեալ, անշշունչ դիակ:
Գարնան լուսընկայ գիշերը պայծառ
Չի յուզում սիրտը գիւղի խօրոտին,

Եւ սիրոյ երգը բոցում, ոլորում՝
Գեղջուկ կարինի կոկորդից թռած՝
Չի շոյում գլխի՝ փունջը սիրուհուն...
Ասողեր շարէշար պէծ պէծին տալով՝
Կապոյտ երկնքով հանդարտ սահում են,
Մինչև լուսատուը անյայտ անդունդից
Եկաւ ողջունեց մեր խաւար երկիր:
— Բայց գիւղի էլի մրունջ, բլրին կպած՝
Ծա՜նր տնքում է՝ անիծս, անշշուկ...
Կանչի՝ էլ չեղաւ քաջ աքաղաղին,
Որ միշտ սովոր էր, իր խրոխտ ձայնով,
Գիւղը վեր հանել, գործի հրաւիրել:

Ասողը բարձրացաւ ու առաջացաւ,
Նրա եռեւից երկինքն արիւնեց,
Բայց էլի խաղաղ գիւղը ննջում է,
Բլուրի վրայ սև հողին կպած...
Զհնչեց արիւզ մանուկ հովուին,
Զշարժեց հօտը մեղմ ձայնը նրա,
Եւ զառնուկների բայիւնը մաղձոտ
Չյուզեց ոչխարը մայրական խանդով...
Անիծո՜ւ, անշշուկ գիւղը մնջում էր,
Կենդանի էակ մէջը մեռել էր...

Արիւնեց կարմիր, վառ աղօթարան,
Փոքրիկ գմբէթի խաչը փայլեցաւ,
Եւ խոր լռութեան ապարանի միջից
Մի զօրաւոր լուեց, տխո՜ւր ու տրտում:
Ղօղանջը զանգի գնա՜ց, տարածուեց,
Հովիտը կանաչ լեցուեցաւ ձայնով.

Առջին զօղանջին յաջորդեց երկրորդը,
Իսկ երրորդով էլ վերջացաւ բոլորը...
Անխօս. անշշուկ գիշերը մնջում էր,
Կենդանի կրակ մէջը մնարել էր:

Պառաւ մամիկը, խաչելով երես,
Զծեծեց դարպուտ կուրծքը թոռնցքով.
Ժամու զանգերին՝ մրուտ ու փոշոտ՝
Համբոյր չտուեց թոռոմած շրթնով...:
Ծերուկն ալեհեր, քայլով դողդոջուն,
Մեղեսիկ ծերին դէպ ժամ չդիմեց.
Եւ խաչելութեան պատկերի առաջ
Ծունր չկրկնեց՝ «մեղայ», ասելով...
Սուրբ պատկերները պատերին կպած՝
Տիւրբ՝ ու տրտում արտասուում էին,
Բարեպաշտ ծերը մոմեր չվառեց.
Առաւ լոյսի մէջ նրանց չոգոդեց...:

Վառ արշալոյսը իր ծէզը ճօղեց.
Մէկ-մէկ թռչնիկներ ծառի ոտերին
Քիչ փափաքին՝ մեղմ դայլայլիկներ.
Գեղջկուհիները՝ սափորներ ուսին՝
Աղբիւր չփազեցին ուրախ քրքիչով.
Աղբիւրի գլխին կուժը վար դրած՝
Կարմիր այտերը ջրով չցօղեցին.
Եւ ճոխ մազերը, սև ու փայլփլուն,
Տասնեակ ճիւղերով երկար չհիւսեցին:

Կանուչ, վառ գոյնով մարգը փայլեցաւ.
Ողջ բնութիւնը շքեղ պճնանք էր.

Նախիր դուրս չեկաւ առողջ բառաչով...
Ջահիլ մաճկալի առնական լէլէն
Դաշտերի միջով եզը չքշեց,
Ժանգոտած խոփը ոսկի գութանի
Կուսական հողի կուրծքը չպատռեց...
Խաղաղ ու անդորը գիւղը մնջում էր,
Դեռանքի կրակը մէջը մարել էր...

Մօրուքը ճերմակ՝ ծերուկ քահանան
Գաւազան ձեռին, դողդոջ քայլերով
Դուրս եկաւ ժամուց, ժամկոչն էլ ետին,
Դէմ աղօթրանին ուղիղ կանգնեցին:

Արև ոսկեվառ, հրեղէն մի գունտ,
Հեւքով ու ջղտա՝ ծիւնապատ լեռնից
Դէպ վեր էր մղւում հուժկու ձգտումով.
Բայց նրանք երբէք խաչ չհանեցին.
Եւ ոչ էլ աղօթք չմրմնջեցին...
Հովտին նայեցին, — կանգաչ ոսկեվառ.
Վաղորդայն ցօղի վառ մարգարիտներ՝
Նուրբ ծիածանի նման երբեւիցէ՝
Փայլփլում էին զմրուխտ. աղամանդ...

Ծերուկ տէրտէրի նշանի վրայ՝
Ժամկոչը կաղլիկ դէպ առաջ գնաց,
Մի աղբակոյտի վրայ էլ մնաց:
Զարկեց կոչնակին ուժգին հարուածով՝

Ինկաւ տնէ տուն, կաղ կաղ պտտեց,
Արդէն կիսաբաց դռներին խփեց.
Ու այսպէս կանչեց իր զիլ, ծեր ձայնով.

—«Վե՛ր ելէ՛ք, զարթէ՛ք,
Արթուն թէ քնած՝
Անօթի թմրած,
Վե՛ր ելէք, շարժէ՛ք...
Բացուեցաւ գարո՛ւն,
Հալեց դաշտի ձիւն.
Կանաչեց հովիտ,
Խոտ շատ է, առատ,
Վե՛ր կացէ՛ք, շարժէ՛ք,
Դաշան արածեցէ՛ք...»

Կաղլիկ ծերուկը արցունքոտ աչքով՝
Բոլոր դռների առաջը կանգնեց,
Իր երգը երգեց լալական ձայնով...

Եւ նրա յետից մարդու ստուերներ
Փորսող սողալով թաթերին ինկած,
Կեղտոտ, կոտրտած շեմքերի վրայ,
Դալուկ դէմքերով գեռալ սկսան...:
Իրար խռնուած որպէս սողուններ,
Մարած աչքերով շուրջը դիտեցին.
Գլուխը հազիւ աջ ձախ շարժելով
Մշուշ հայեացքով՝ յոյսը փնտռեցին...

Ցուպին կռթնած ծերուկ տէրտէրը
Մեծ աղբակոյտի վրան կանգնած էր,
Ետ դարձաւ, նայեց, սողուններ տեսաւ,

Առատ արցունքի զուլալ կայլակները.
Դէպ վար հոսեցին ծերմակ մօրուքով.

—«Եկէ՛ք, մի՛ վախնաք,
— Գոչեց բարձրաձայն,
Դո՛ւրս եկէք մութից,
Ձեր տան խաւարից,
Եկէ՛ք, մի՛, վախնաք.
Ձեզի ասում եմ
Էլ մի՛ աղօթէ՛ք.
Ում վորը կուշտ է,
Թող նա աղօթէ.
Էլ աղօթք պէտք չէ,
Երբ մարդ սողում է.
Աղօթքը կուշտին
Միայն վայել է...
Եկէ՛ք մի՛ վախնաք,
Էլ մի՛ աղօթէք.
Կանուչը շատ է.
Այժմ արածեցէ՛ք...»

Դոների շեմքից սողացող ամբոխ
Սկսաւ զեռալ դէպի աղբակոյտ.
Որդիք իրենց մօր փեշերին կպան.
Եղբայր ու քոյրեր իրար մոռացան.
Իրար խառնեցան հայր ու որդիներ.
Ամենքը միասին և զարծեալ Հոկ Հոկ.
Ծանր տնքոցով, խո՛ր, արնոտային.
Խո՛ւլ ընդոցներով, մրմուռ հառաչով
Սողացին առաջ, դէպի աղբակոյտ.

Ուր ծեր Տէրտէրը փայտից կռթնած՝
Առատ արցունքով մօրուքն էր ցողում:

—«Դէ՛հ որդիք, աղե՛ր,
Քիչ եռանդ առէք,
Հրէ՛ն, կանաչ է,
Դաշտին նայեցէք,
Ոտներ շարժեցէք,
Եթէ դժուար է,
Մի քիչ էլ թեւեր,
Առուակի էն կողմ
Սողալով անցէք.
Թարմ կանաչի մէջ
Կո՛ւշտ արածեցէ՛ք...»

Մարդու կմախքներ, չորացած դէմքեր,
Դեղնած կաշու տակ կապոյտ երակներ,
Ցնցոտիի մէջ փաթաթած ոսկորներ
Մրջիւնների պէս գետալ սկսան...
Աղբակոյտերի դէզ բլուրներին,
Աւելուցքների, կեղտերի միջև,
Դանդաղ շարժումով միշտ թաւալգլոր,
Պտոյտ են գալիս՝ տխո՛ւր, գլխիկոր...
Ուզում են կանգնել, առաջ կռանում,
Բայց հազիւ գետնից բարձրանում մի փոքր՝
Ծնկներ կթռտում, ուժ չկայ միջին,
Մէջքը թուլանում, չկայ զօրութիւն,
Եւ դարձեալ կողքին ընկնում շնչասպառ,
Ապո՛ւշ հայեացքով չորս կողմն են նայում...

Վիզը ասես չի մնում ուղիղ,
Որպէս կտրուած ցորենի ծղօտ.

Գլուխը արդէն ուսին չի կանգնում,
Ոսկրացած գանգը խռիւ մազերով
Նուրբ վզի վրայ պտոյտ է գալիս...

Սև եղունգները դարձած մագիլներ՝
Մատները գինել որպէս ճիրաններ,
Մերկ բազուկները երբ ուժ են առնում,
Աղբերի մէջն են ուղղակի մտնում,
Ակնապիշ աչքով, խենթուկ, ահարկու.
Փնտռում անհամբեր մի բան ուտելու...

Մի կաշու կտոր, կամ նման մի բան,
Զորցած տրեխի սև երիզ երկայն,
Կամ թէ սատկած շան բորբոսնած ականջ
Առամն է ծգում մի ջղուտ պառաւ...
Ծամում է. ծամում, ատամ չի կտրում,
Դարձնում աջ ու ձախ թօշնած շրթունքի.
Փայտացած ձեռքով քաշում, քաշքշում,
Ատամ չի կտրում, ունա՞յն աշխատանք...
Կատղած, զայրացած դէն է շպրտում...

Բայց ատամոքը դատարկ ու նօթի,
Զազիր, բռնակալ հրէշի նման.
Խօսք չի հասկանում, ի՛նն է պահանջում...

Ճիշտ նրա կողքին, մատաղաշ մի մանուկ
Մեռելի գոյնով, դէմքը այլանդակ.
Ատուած իմ, արդեօք զերեզման՞ն կ՚երթայ
Թէ՞ հէնց նո՛ր ահա այնտեղից կուգայ,
Քամակի վրայ պառկած անզգայ,

Աչքը կիսախուփ, գրեթէ փակած՝
Հանդարտ նստած է մեռնելու պատրաստ...:

Մի Հահիլ կին կայ այս խմբից հեռու,
Մազերը առատ, խռիւն օձային,
Սև աչքը մեծ-մեծ՝ փայլում են կրակ...
Նստած է գետին, անհանգիստ, յուզուած,
Անեղ ու հուժկու կրքով կատաղած:
Կրծքին է սեղմում մանուկը փոքրիկ,
Ապա վերցնում, համբոյր է առնում,
Ատամ կրճտում, աչքերը լարում,
Կրծքին է սեղմում, ատամ կրճտում...
Տղան մեռա՞ծ է, չի՞ զգում ոչինչ...

Մայրը որդուն գետին է ծգում,
Թողնում, հեռանում, նորից մօտենում,
Վերջին անգամն էլ իր կրծքին առաւ,
Թեւի փափուկ միս ատամով բռնեց,
Շատ ուժեղ խածեց, միսը պլոկեց,
Տղային դարձեալ շպրտեց գետին,
Եւ մեծ քրքիջով ծամեց միս տղին...

Սարսափելի էր սովը ահարկու.
Օրեր շարունակ անօթի, սոված
Տներում փակուած անջուր ու անհաց,
Մեռած ու կորած կէսից աւելին,
Իսկ մնացածները զժուած, խենթեցած,
Ուշաթափ, խելար, մոլոր ու շիւար՝
Պատրաստուում էին մեռնելու համար...:

Տէրտէրը ապշած՝ կուզ կուզ քայլելով՝
Խմբին մօտեցաւ, էլ բարձր գոռալով.

—«Առա՛ջ տղացէք,
Շուտ, դաշտը ինչէք,
Խոտը առատ է,
Կուշտ արածեցէ՛ք...»

Մարդ-տղուններին զանգուածը տժգոյն
Կուռ տրորելով՝ գետնաքարշ ինկած,
Դանդաղ, ու հազիւ դէպ ջուր շարժեցաւ.
Մէջքերը երկու ծալծլուում էին,
Նման օձային նուրբ գալարների,
Փորտոր անդամները տատանում էին
Կարմիր ոլորների վխտումին նման...
Մինչ առուն հանգիստ նեխութեան վիճից,
Խաղաղ խոխոջով առաջ էր գնում:

Զեռացող ամբոխն երբ հասաւ ափին,
Իրար կող կողի շարան կազմեցին,
Նիհար ու երկար վիզը ձգելով,
Հոտած ու նեխած ջուրը ծծեցին...

Կանաչ մամուռի ծոլումնքը լերթ-լերթ
Այր մարդկանց երկար բեխից էր կախում,
Կանանց մազերը խռիւ ու ցրիւ
Մամռից աւելի ջուրը կը ծածկէր...:
Ոտկախ տղալով առուակն էլ անցան,
Կանաչ արտերի եզրին մօտեցան:

Ջահիլ կտրիճները ամենից առաջ
Շտապ սղալով ճամբայ կարեցին.
Եւ ուրախութեան առաջին ճիչով՝
Սողացող խմբին աւետիս տուին...
Ապուշ հայեացքները փայլիլ սկսան,
Դեղին շրթունքները ետ ետ բացուեցան,
Սպիտակագոյն ատամները փայլեց,
Այտերի վրայ, կապիճների շուրջ,
Ժպիտի նման կնճիռներ կազմեց...

Արեւի գունդը միշտ կը բարձրանար,
Իր լուսաթաթախ ճառագայթներով
Ամբողջ հովիտը կանաչ կը վառէր...

Երբեմնի կտրիճ երիտասարդը
Երբ ձեռք էր ձգում ցողունը՝ բռնում,
Կանաչ ու նուրբ բոյսը հիմքից կտրելու,
Ուժը չէր զօրում թուլցած բազուկին,
Բունը արմատից բաժնել չէր լինում...

— — — — — — — — — — — —

Լոկ կենդանական բնազդն էր գործում,
Բերանը կ'ուզէր անպատճառ ծամել.
Կանաչին հասած պէտք էր արածել...

Չէ՞ որ ոչխարն էլ հովիւ կ'ունենայ,
Կամ կովի նախիրն էլ իրեն նախրորդ,
Մարդկանց որդիներ կենդանի դարձած,
Միայն ուտելու անյագ փափաքով

Անասունների խմբակ են կազմել...
Հովիւ քահանան եւ էր մնացել.

—«Ինչո՞ւ էք շիւաղը,—
Հնչեց նրա ձայն,
Էլ մի՛ ամաչէ՛ք,
Կովի պէս կերէ՛ք.
Բազուկ չի՞ շարժում,
Ատամով կտրէք...
Շղարշ է միայն,
Եթէ որ պատռի,
Մարդ՝ անասունի
ճիշտ կը նմանի...
Դէ՜հ, կերէ՛ք, որդի՛ք,
Ո՞ր կենդանին է,.
Որ չի արածում...
Էլ մի՛ ամաչէ՛ք,
Կովի պէ՛ս կերէք...»

Գլուխը ցցած՝ որպէս մի խխունջ,
Կամ թէ կրեայ՝ պատեանը կոտրած,
Դժգոհ ձեւերով դէմքը շարժեցին
Եւ մոլտալով իրար դիտեցին...

Կարճ միջոցի մէջ մարդկային ամբոխ
Գետնի երեսին շիփ շիտակ կպած՝
Որպէս սողուններ փորտող էր տալիս...
Ոչխարի նման՞, բայց նա կանգնած է,
Կովի՞ կամ եզա՞ն, բնա՛ւ նման չէր,
Մի նմանութիւն դժուար է գտնել,
Երբ որ մարդիկ են դաշտն արածողներ...

Գլուխը խրած կանայչութեան մէջ՝
Բերանն է առնում ծղօտը դալար,
Ծամում է, ծամում, անզօր ծնօտով
Անզգայաբար՝ յետոյ կուլ տալիս...
Ճամբան բացւում է, շարժում սկսում...
Լեզուն դառնում է. քիմքը վարժւում...

Կարծես հրաշքո՞վ. թէ մի այլ ուժով՝
Բաւ է որ դատարկ ստամոքսի մէջ
Սնունդի չնչին մի կտոր ընկնի.
Ուժ ու զօրութիւն նրանից յետոյ
Զորս կողմ կը ցրուի ամբողջ մարմնի...
Խոտի ծամելը առաջն էր դժուար,
Տակաւ առ տակաւ այնքան դիւրացաւ,
Որ կանայչ փրփուր բերանը ծածկեց,
Երբ թարմ բոյսերը առանց խտրութեան,
Տերև ու ծաղիկ թուշը լեցուեցան...

Հեշտանքը մեծ էր. անհո՞ւն. գերազանց.

— — — — — — — — — — — — — —

Միշտ էլ այդպէս է, ճիշտ անասնային
Գործողութեան մէջ. ըստէն է միայն
Հաճոյք պատճառում և ատուածանում,
Նրանից յետոյ, անմիջապէս ետք.
Ամէն ինչ ոչինչ, ամէն ինչ ունայն...:
Առջին ըստէին խոտը ծամեցին,
Անչա՜փ բերկրանքով փորը լեցրին.
Բայց ո՞ւր էր խելքը, որ խոտը չոկէր,
Վատը լաւից, դառը համեղից

Ընարէր ու զատէր, և լաւը ուտէր...

Երբ մեծ բնութեան հզօր կարիքի
Զայնն է բարձրանում. լռում է խելքը,
Բանականութիւնն այլևս չի գործում...

Զինեալներից յետոյ, թաւիշ կանաչով
Գետինը ծածկող անուշ մոմարը
Շրթունքի եզրին փրփուր էր կազմում.
Համը ոչինչ էր, շուտ փոր էր գնում...
Ատամն էր կտրում խոտը իր հիմքից,
Աչքը չէր նայում նրա տեսակին...
Եւ մոմարի հետ միևնոյն ճամբով
Օդին էր գնում ատամների տակ.
Արնոտեղ մանրուում, փրփուր դուրս տալիս,
Իսկ միւս հիւթը ներքև չամբուում...:

Անա մի չանչալ ամենից առաջ,
Որպէս մի սրած երկաթէ մանգաղ.
Հնձում է խոտը ճերմակ ատամով,
Կանաչ փրփուրը շրթունքին տալիս,
Իսկ միւս հիւթը ներքեւն է չամբում...:

Արածող խմբից փորը ինչ հեռացաւ,
Բայց արածելուց յանկարծ կանգ առաւ,
Գետնին միացած ողորկ, հարթ փորը
Ուռել սկսաւ տակաւ առ տակաւ.
Այլևս դժուար էր փորտող միշտ մնալ,
Փորը ուռչում էր, խեղճը հեղում էր,
Իսկ երբ մի քիչ ուժ հազիւ ստացաւ,
Արագ շարժումով բանակին դարձաւ...:

Դէս օր էր արդէն, արեւը զէնիթին
Որպէս տիրական փառքով բազմել էր.
Աներողջ հովիտը լոյսով վառուած էր...

Երիտասարդը նախ այնպէս կարծեց,
Թէ փորը ուռեց և լաւ կշտացաւ...
Բայց արածելուց յետոյ էլ նորէն
Փորի ուռեցքը բլուր էր կազմում.
Եւ բլրակը որքան բարձրանար,
Շնչառութիւնը կը դժուարանար...
Մոմար չէր միայն այդ կերած խոտը...
— — — — — — — — — — — — —

Գէպիտութիւնը բնութեան զարդն է.
Զարի հետ բարիք, խենթի հետ խելօք՝
Վատի հետ լաւը. գէշի հետ խօրօտ.
Չքնաղ բնութեան պերճանքն են կազմում.

Այս դաշտի մէջն էլ նոյնպէս այլազան,
Հազար մի տեսակ բոյսեր զանազան
Իրար հետ ծլում ու ծաղկում էին.
Եւ չքնաղ գարուն զարդարում էին...
Մոմարի հետը. ճիշտ նրա կողքին
Ծլում էր վայրի կռնուկը լեղի...:

Ինչպէս ամէն մարդ իր ծնած օրից
Օժտած է լինում ամէն մի տեսակ ձիրքով,
Կամ իւրաքանչիւր տեսակ կենդանին
Իր յատուկ բնոյթն ու բնազդն ունի,
Նոյնպէս էլ բոյսեր ամէն մի տեսակ

Իրենց մէջ որքա՜ն գաղտնիք են պահում...:

Ո՞ւմ մտքից կ՚անցնէր՝ կռնուկը չոկել,
Մոմարից զատել, —այդ թոյնը չուտել,
Երբ անօթութիւն, բաղցը ուժեղ էր,
Երբ անասնային բնազդն իսկ չկար...:

Շատերը կերան կռնուկը լեղի,
Կանաչ փրփուրը շրթներին տուց,
Իսկ միւս հիւթը ներքեւ չամբուց...
Այլազան ձայներ... խեղթուկ շարժումներ...
Ծայր տուին խմբի այս այն անհատից...

Մի երիտասարդ աղջիկ սեւահեր՝
Խիտ մազերը ուսերին թափած՝
Ցնցոտիները պատռուց, պատռատեց,
Վեր կացաւ, կանգնեց ու դէմն շպրտեց,
Ճերմակ առամները ցոյց տուեց շարքով,
Քրքիչ բարձրացուց, անմիտ հոհոց,
Մերկ բազուկները թափահարելով,
Վազեց խմբի մէջ այս կողմից այն կողմ...

—«Աղջի՛կ, ամօթ է»,— ճչաց մայրը հեռուից.
Բայց երջանկութիւն եթէ կայ խեղթին,
Չէ՞ որ այդ նրան գիտակ չլինելն է...

Մարմնի ոսկորները համրուում էին,
Մազերը փետուում, ճչում բարձրաձայն,
Մի երգ էր երգում, կամ շան պէս ոռնում,
Կենդանիների զանազան ձայներ
Նրա կոկորդից դուրս էին թռչում...

Վազում էր. յոգնում, ընկնում էր գետին,
Մի քիչ նուաղում. զարթնում լալիս...:

Թշուառութիւնը երկնից առաքուած,
Զարիք չէ՞ արդեօք մարդկանց պարգեւած.
Խոտ արածեցին, քիչ էլ կշտացան,
Բայց ի՞նչ տանջանք էր, Աստուած իմ, տանջա՜նք:
Խենթերի կողքին թոյնով վարակուած՝
Մարդիկ մեռնում են վա՜յ գլխին տալով:

Մի ողամարդու բերանը գետնին
Խոտ էր կտրտում ատամով բռնած.
Կարծես իր ներսից հրաբուխ ժայթքեց,
Կանաչ, սեւ լաւան դուրս վիժեց բերնից.
—Դառն էր ու լեղի,— նա թունաւորուեց...
Փղձկում էր ուժգին, սիրտը նոր գալիս,
Քրտինքը պատել խեղճ տատապեալին,
Ողձկում էր. ողձկում ուժգին ցնցումով՝
Սիրտը սրոկւում էր, թափում փորոտիք.
Էլ ուժ չմնաց, նուաղեց խապտռ.
Միայն մրմունջն էր լսւում շրթունքից...:

Ամբողջ օրն այսպէս դաշտում՝ արածեցին,
Ոմանք կիսամեռ, ուրիշներ մեռած,
Ոմանք կենդանի կամ թէ ուշաթափ...

Ջրի կարիքը շատ էին զգում,
Բայց մինչև գի՞ւղը բարձրանալ նորից.

Ուժ չկար մէջերը, ոչ ոք չէր կարող,
Խոսք չը տուեց պէտք եղած սնունդ,
Նրանք մարդ էին, և ոչ անասուն...

Երեխի տաքից պատպակը սառած էր...
—Ջո՜ւր, ջո՜ւր,— լսում էր շորս կողմ...

Դաշտից քիչ հեռու մի գետ էր հոսում.
Մինչև այդ չրին նախիրը հասած,
Արևը արդէն իր մայրը մտաւ,
Եւ վերջալոյսի վերջին շողերին
Հակոյ խաւարի մութը յաջորդեց:

Ցուց էր ու շիւան. գետը յորդել էր..
Գարնանն հեղեղները լեռներից փրթած՝
Խոր հովիտների փոքրիկ առուակներ,
Լեռան լանջերի արգիները զուլալ՝
Խօսքը մէկ արած՝ իրար ժողուելով
Մեծ գետի հունը լեցրել են ջրով:
Պղտոր հեղուկը որպէս մի վիշապ,
Որպէս մի վիշապ բաշը թօթուելով՝
Հունի եզրերից դուրս է տարածում,
Արծաթի դաշտերի երեսը ծածկում...

Մութ է ու խաւար, սհաւոր գիշեր.
Մարդկանց որդիներ գետի ափ թափուած,
Ուզում են ծծել ջուրը պատպակած.
Բայց ախորժ է բոլոր. աչքը չի տեսնում.
Գոռ ալիքները յորդած մեծ գետի
Անփոյթ թաւալում, յառաջ գլորում,

Խաւարից կուրցած մարդկանց ոլորմները
Մեղմիկ շոյելով իր գիրկն է առնում...:
Մարդիկ սողում են. չեն տեսնում ոչինչ.
Խոր անդունդները ոլորապտույտ
Շա՜տ հիւրասէր են. շուտ են կլանում...:
Ալիքի ծոցը այնքա՜ն է փափկիկ.
Ոչի՜նչ չեն զգում արածող մարդիկ...

Խաւար է, գիշեր, սարսափն անուր,
Ալիքը զետի ոռնում է հեռուից...
Անշունչ դիակը լողում է հանգիստ,
Իսկ կիսամեռը ճչում տիղմի մէջ...
Խաւար է. գիշեր. սարսափն անարկու...:

Մարդկանց տանջանքը մի սառուցած դարձած՝
Ողջ դաշտի վրայ թափահարում է,
Եւ դիակների դէզերի միջև.
Տէրտէրը ծերուկ՝ աղօթքից յոգնած.
Այն սև սառծուն թոռ միշտ անիծէ...:

Ռատաբազար, 2 Դեկ. 1909

■ ԳԻՆ Ի ՂՐՈՒՇ ■

ԿԱՊՄԱՏՈՒՆ Ա. ԲԱՂԴԱՆՈՅՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չախմախճիլար Մեծ Նոր խան թիւ 5-6

5746
5747
5748
5749
5750
5751

2013